14. **Пугачев В.П.** Микрополитика как фактор социальной деградации в современной России // Полигнозис: Философия. Наука. Культура. Религия: Проблемный научно-философский и культурологический ежеквартальный журнал. - 2002. - №4 . - С.48-67.
15. **Погосян Г.А.** Современное армянское общество: особенности трансформации / Нац. Академия наук Республики Армения; Ин-т философии, социологии и права; Армянская социол. ассоциация.- М.: Academia, 2005. -324 с.

Ս.Գ. ՄԱՆԹԱՇՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՄՈՏԻՎԱՑԻԱ՝ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԹԵ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ

Դիտարկվում են տնտեսական մոտիվացիայի խնդիրները: Ուսումնասիրվում է դեստրուկտիվ մոտիվացիան: Քննարկվում են դեստրուկտիվ մոտիվացիայի սահմանափակման ուղիները:

Առանցքային բառեր. տնտեսական վարքաձև, կոնստրուկտիվ մոտիվացիա, դեստրուկտիվ մոտիվացիա, ապամոտիվացիա, միկրոքաղաքականություն:

S.G. MANTASHYAN

ECONOMIC BEHAVIOUR MOTIVATION – CONSTUCTIVE OR DESTRUCTIVE

The issues on economical behaviour are considered. The destructive motivation is studied. Recommendations on restricting the destructive motivation are discussed.

Keywords: economic behaviour, constructive motivation, destructive motivation, demotivation, micropolitics.

ՀՏԴ 316.6:615.851.135

Ա.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԽՈՍՔԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ

Դիտարկվում է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը, որը հայ իրականության մեջ ընկալվում է որպես խոսքաբուժության դասական օրինակ:

Առանցքային բառեր. աղոթամատյան, խոսքաբուժություն, ինքնաճանաչում, կյանքի իմաստ:

Անհիշելի ժամանակներից ի վեր մարդկությանը հայտնի է եղել «խոսքաբուժություն» երևույթը: Ժամանակի ընթացքում որոշակի փոփոխություններ, այդ դիսցիպլինը հասել է մինչև մեր օրերը:

Այժմ նոր իմաստ հաղորդելով, ուսումնասիրման առարկայատիրույթը մեծացնելով և խորացնելով՝ վերաարժևորել այն, դարձնել գիտական հետազոտության առարկա:

Ժամանակակից բժշկագիտության մեջ որոշ հիվանդություններ բուժելու նպատակով կիրառում են հոգեթերապիայի նոր համակարգ՝ լոգոթերապիան (խոսքաբուժում): Այդ ուղղության հիմնադիրն է ավստրիացի գիտնական Վիկտոր Ֆրանկլը:

Լոգոթերապիայով բուժման նպատակն է օգնել հիվանդին՝ իմաստավորելու սեփական կյանքը, կրելու որոշակի պատասխանատվություն, պայքարելու և գտնելու միջոցներ՝ իր նպատակների իրականացման համար:

Հայ իրականության մեջ խոսքաբուժության կիրառման դասական օրինակ է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» կամ, ինչպես ժողովուրդն է անվանում, «Նարեկ» ստեղծագործությունը:

Մեծ մտածողը, մարդկային հոգու էության մեծագույն գիտակը գերազանց է իմացել խոսքի ներգործման ուժն ու եղանակները:

Այդ մասին նա գրում է.

Թող ողբերգության մատյանն այս, բարձրյա՛լ,
Որ սկսել եմ գրել հանուն քո,
Կենաց դեղ լինի արարածներիդ
Մարմնի և հոգու վիշտն ու ցավերը
բուժելու համար [1]:

Նարեկացու խոսքը զորավոր ուժ ունի՝ մարդու հոգում ստեղծելու հանդարտություն, ներդաշնակություն, հավատ, սեր, երանություն:

Ուսումնասիրելով ստեղծագործությունը, նկատում ենք, թե բովանդակային առումով Նարեկացին որքան հմտորեն է տիրապետել խոսքի ներգործման գաղտնիքներին: Իրողություն է նաև այն, որ մեծ մտածողը միակողմանիորեն չի չարաշահել այդ հնարավորությունները, ինչպես վարվում են ներկայիս շատ հոգեբաններ: Նարեկացու մոտեցումը առանձնահատուկ է, նա նկատելի արդյունքի է հասնում՝ մարդկանց ընկալման ոլորտը, գիտակցական դաշտը ընդարձակելով, օգնելով հասնելու ինքնաճանաչման:

Նարեկացին իր կյանքն իմաստավորում է հենց փորձությունների մեջ՝ սեփական տառապանքն ընկալելով և ընդունելով ոչ թե որպես կործանարար հոգեվիճակ, այլ ուսումնասիրության օբյեկտ:

Մի՞թե կատարյալ փրկություն պիտի ինձ չպարգևես,
Չմատուցե՞ս դեղ իմ վերքերին,
Ո՛չ խոսվածքներիս բուժիչ բալասան
Եվ ոչ էլ դարման՝ տկարությանս… [2]:

Իրականության առաջադրած բազմաթիվ խնդիրների մեջ Նարեկացին գտնում է իր անձնականը, որն էլ կարևորելով՝ օգնում է մարդուն իմաստավորելու իր կյանքը:

Ստեղծագործությունը դառնում է հազարավոր մարդկանց կյանքի ուղեցույց՝ փոխանցվելով սերնդեսերունդ:

Մեծագույն մարդագետն իր քննելիք առարկան լուսավորում է ամեն կողմից՝ բացահայտելով մարդ տեսակի հատկությունները, նրա գոյության հարթությունը, կյանքի իմաստը, և, ինչու ոչ, քննում է նաև անքննելին՝ Աստծուն, բնութագրելով աստվածային էության տարբեր կողմերը:

Ինքնանպատակ հաճույքի, զեխ կյանքի հակումը փակում է մարդու ճշմարիտ ուղին և տանում կեղծիքի և ստորության ճանապարհով:

Նարեկացին, տեսնելով այս ամենը, գրում է, որ կյանքի դուռն ընդմիշտ փակվել է իր առաջ՝ վերացնելով ամեն մխիթարություն [3]:

Սակայն մարդկային էակը ոչ միայն հատուցում է իր արարքների համար, կրելով անլուր ու անհաղթահարելի տառապանքներ, այլև, Աստծո ողորմածությամբ, զգում է իր վարքի կործանարար բնույթը և ինչ – որ չափով իմաստնանալով՝ դիմում է Աստծուն, ներողություն ու թողություն հայցելով՝ բժշկություն է աղերսում:

Օրհնյա՛լ և օրհնյա՛լ և դարձյալ օրհնյա՛լ,
Ընդունելով ինձ այդ նույն հավատով՝
Կործանումից ետ պահիր, բարերա՛ր,
Բուժի՛ր, ողորմած, այս ախտավարակ
հիվանդությունից [4]:

«Նարեկը» մի աղերսագիրք է առ Աստված՝ ի սեր և փրկություն մարդկության: Եվ իզուր չէ, որ մեծ մտածողն ու գրողը իր աղոթամատյանն անվանել է «Կենաց փրկության դեղ»:

Նարեկացին ստեղծում է իրեն հատուկ մի այնպիսի լեզվամտածողության առարկայատիրույթ, որում ընթերցողը ձեռք է բերում վստահություն, անկեղծանում և համարձակվում է հոգեվերլուծողի հետ ուսումնասիրել ինքն իրեն, նաև կողմնակի հայացքով դիտել իր անձը և ընդունելով դիմացինի դիրքորոշումը՝ ճանաչել իր մեղքերը (որը ամենակարևորն է) և դրանով հանդերձ, խոստովանել բուժվել ու ազնվանալ: Գիտակցելով և խոստովանելով իր մեղքերը՝ մարդն աղերսում է Աստծուն ազատել իրեն ստորացուցիչ այդ ողջ բեռից:

Սակայն խոստովանությունն արտահայտման սոսկ գործընթաց չէ, խոսքի ինքնաբերական արտաբերում չէ, այլ ունի խոր, անձնային իմաստ:

Ինչպես համարեմ ես ինքս ինձ մարդ,
Երբ կարգն եմ դասված տմարդիների.
Կամ ինչպես պիտի բանական կոչվեմ,
Երբ անբանների կցորդ եմ դարձել իմ հիմարությամբ [5]:

Անձի ըմբռնման նման դիրքորոշման շնորհիվ՝ «Մատյան ողբերգությանը» -ը սովորական աղոթագրքից վերածվել է մարդկային հոգու բժշկարանի:

Այս երևույթը կարելի է բացատրել «Նարեկի» կախարդական ազդեցությամբ, երկի ԲԱՆ-երի յուրահատուկ կառուցվածքով և բովանդակային խոր իմաստով:

Գրիգոր Նարեկացին թեև մահու չափ հուսահատ է, բայց փրկիվելու, վերակենդանանալու և ապրելու մեծ հույս ու հավատ ունի:

Նարեկացու պատկերացմամբ Աստված ոչ միայն արարիչ է, այլև կյանքի պահապան և փրկիչ: Առանց սխալվելու կարելի է ասել, որ Աստված յուրատեսակ բժիշկ է, քանզի աղերսալից ԲԱՆ-երի մեջ կան բուժվելու, ապաքինվելու խնդիրներ:

Ստեղծագործության գրեթե ամեն մի գլխում կա բժշկագիտական արտահայտություն: Աստված, ըստ Նարեկացու, ոչ միայն արարել է մարդուն, այլև պահպանում է բազմազան ախտերով, սակայն Աստված լիովին ապաքինում է մարդուն:

Այսպիսով, բուժման երևույթը ապաքինումն է: Նարեկացու երկի մեջ բժշկի ու հիվանդի կերպարները հստակ դիտարկման նյութ են դառնում : Այդ կատարվում է և՛ անմիջական հաղորդակցումով, և մեծ տարածության վրա, քանզի Աստծո համար ժամանակը և տարածությունը նշանակություն չունեն.

Աստված հարաբերական իմաստից դուրս է.
Աստվա՛ծ բարերար և ամենակալ,
հավիտենական,
Արարիչ լույսի, հաստիչ գիշերվա,
Դու կյանք մահվան մեջ ու լույս խավարում,
Սպասողի հույս և համբերություն վարանածներիս
Որ ամենարվեստ քո իմաստությամբ
Ստվերը մահվան այգի ես փոխում…[6]:

Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը հայ ազգին շնորհված եզակի աստվածային պարգև է: Այն կարիք ունի նորովի արժևորվելու և գնահատվելու:

Ստեղծագործությունը իր չափանիշներով արտահայտում է համամարդկային կեցության ընդհանրական օրենքներն ու սկզբունքները, այդ իսկ պատճառով այն կիրառելի է կենսական բոլոր հանգամանքներում:

Այսօր մենք խիստ կարիք ունենք մերձենալու, հաղորդակից լինելու «Նարեկին», նորովի իմաստավորելու այն: Այդ ստեղծագործությունը միշտ արդիական է, միշտ ժամանակակից, քանզի արտահայտում է մարդու գոյության ընդհանրական օրենքներն ու սկզբունքները հատկապես նշանակալից իրադարձությունների, հեղափոխական անցումների ընթացքում: Գործը արժևորվում է հատկապես, երբ արմատական փոփոխություններ են կատարվում անհատների և հասարակական խմբերի կյանքում: Իրավիճակները պարզելու, կյանքը իմաստավորելու համար «Նարեկը» մեծ դեր է կատարում՝ դառնալով մարդու համար նեցուկ և հենարան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գրիգոր Նարեկացի,** Մատյան ողբերգության, Տաղեր, թարգմանություն Վազգեն Գևորգյանի. - Երևան, 1979. - էջ 26:
2. տես նույն տեղում, էջ 17:
3. նույն տեղում, էջ 140:
4. նույն տեղում, էջ 248:
5. նույն տեղում, էջ 125:
6. նույն տեղում, էջ 547:

А.В. БАГДАСАРЯН

ЛЕЧЕНИЕ С ПОМОЩЬЮ СЛОВА НАРЕКАЦИ

Исследуется “Книга скорбных песнопений” Григора Нарекаци, рассматриваемая в армянской реальности как классический пример лечения с помощью слова.

Ключевые слова: молитвенник, лечение словом, логотерапия,самопознание, смысл жизни.

A.V. BAGHDASARYAN

NAREKATSI’S WORDTHERAPHY

The “Book of Lamentation” by Gregor Narekatsi, which is considered a classical example of Wordtheraphy in the armenian reality is studied.

Keywords: prayer book, wordtheraphy, logotheraphy, self-recognition, life meaning.

ՀՏԴ 316.42 (1-2) (564.3)

Ա.Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Կիպրոս կղզու քաղաքական պատմության լույսի ներքո դիտարկվում է կղզում հայ համայնքի քաղաքական իրավիճակը: Կիպրոսի հայ համայնքը իր հաստատուն տեղն է զբաղեցնում կղզու հույն ազգաբնակչության շրջանում, վայելում է նրա հարգանքը և ակտիվ մասնակցություն ցուցաբերում երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում:

Առանցքային բառեր. Կիպրոսի հայ համայնք, Թուրքիա, հակամարտություն, հույն բնակչություն, կղզու բռնազավթում:

Դեռ վաղ ժամանակներից Կիպրոս կղզին ունեցել է բուռն քաղաքական պատմություն իր եզակի աշխարհագրական դիրքի պատճառով: Կղզին Սուեզի ջրանցք տանող ծովային ճանապարհները վերահսկելու հնարավորություն է տալիս, ինչով պայմանավորված են նրա շուրջ ծավալվող իրադարձությունները: